

311 (023)

4-60

25 SEP 2006

1 DEC 2009

311(023)

4-50

uy

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ԲԱՐԵԿԱՄՆԵ

1008
35435

1. ԱՄԵՆ ՄԻ ԲԱՆՎՈՐ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ, ԹԵ ԻՆՁ Ե ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դժվար թե հիմի ենպիսի բանվոր կամ գյուղացի լինի, վր լսած չլինի «վիճակագրություն» բառը, բայց դրանցից շատ քչերն են հասկանում վիճակագրության նշանակությունը: Աշխատավորության ահագին մեծամասնությունը մոշ միտյն չգիտե վիճակագրության տված ոգուտը, այլ և յերբեմն գյուղացիները վիճակագիրներին շատ վատ ընդունելություն են ցույց տալիս: «Ավելորդ գլխացավանք ե, ուրիշ վոչինչ», — բացականչում են նրանք, հենց վոր վիճակագիրը յերևում ե գյուղում: — «Մարդ չի հասկանում, թե ելի գլխերին ինչ քամի յե փչել ցուցակագրել մեր ունեցածը, ծծկեր երեխից սկսած մինչև հավ ու ճուտը... Ձե, դրանից լավ հոտ չի գալիս, ելի նոր նալոգի դուռ պիտի բացվի կամ պատերազմ լինի»:

Ետպիսի դատողությունը չհասկանալու հետևանք ե, վորովհետև Խորհրդային իշխանու-

թյան ժամանակ վիճակագրությունը աշխատավոր ժողովրդի ամենահավատարիմ բարեկամն է:

Յեւ ճենց եղ պատճառով ել ամեն մի բանավոր ու գյուղացի շատ լավ պիտի իմանա, թե ինչ է վիճակագրությունը, ինչի համար է, ինչ ոգուտ է տալիս և ինչո՞ւ նա աշխատավորութան լավ և հավատարիմ բարեկամն է:

Խոսենք որինակով:

2. ԱՄԵՆԱՓՈԲՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԵՒ ՀԱՇԻՎ ՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱ

Որինակի համար վերցնենք մի տնտեսություն: Եղ տնտեսությունը ունի ուտող բերաններ, աշխատող ձեռքեր, յերկրագործական գործիքներ, լծկան ու կթան անասուններ, վար ու ցանքս, բաղ ու բախչա: Եղ տան տղամարդիկ ու կնանիք բացի հողի հետ գործ ունենալուց, իրենց իմացած արհեստներն են բանեցնում, շատ անգամ ել գնում են ուրիշ տեղ աշխատանք անելու:

Բոլոր գյուղացիներն ել լավ գիտեն, վոր յեթե ուզում են իրենց տան գործերը հաջող գնան, պետք է իրենց տնտեսության մեջ ամեն բան իր տեղը լինի,—ցանքի չափ սերմացու ունենան, ունեցած հողի հաշվով՝ լծկան, լծկանի հաշվով՝ հող, պետք է ունենան հարկավոր թվով աշխատավորներ և վար ու ցանքսի գործիքներ:

Գյուղացու տնտեսության մեջ ամեն ինչ հաշվի տակ է դրած. հաշված են վոչ միայն մարդիկ, անասունները, գործիքները, հողը, այլ և ցորենի, բրնձի, գարու ամեն մի գրվանքն, մի հատ մեխը, պարանի կտորը, հողե ամանը: Գյուղացին առանց հաշվի իր տան մեջ վոչ մի քայլ չի անում, միայն թե եղ հաշիվը նա անում է սովորության համաձայն, առանց նկատելու, առանց գլխի ընկնելու, վոր հաշիվ է անում: Յեւ յեթե հարց տաս նրան, թե եղ ինչո՞ւ յես եղպես հաշիվ անում, նա իսկույն քեզ կպատասխանի, վոր ուրիշ կերպ չի լինի, վոր յեթե ամեն ինչ հաշվի տակ չգնի, են ժամանակ իր տնտեսությունը քարուքանդ կլինի:

Ինչքան կզարմանա եղ գյուղացին, յեթե մեկը նրան ասի,—«դու վոր եղպես ամեն ինչ հաշվի տակ ես դնում, ասել է, ինքդ ճենց քո տան մեջ վիճակագրություն ես կատարում»: Զարմանալը քիչ է, դեռ կարող է մի լավ ել բարկանալ: Բայց բանը նրանումն է, վոր գյուղ գնացած վիճակագիրն ել ճենց եղ գործն է անում, այսինքն նա ել են հաշիվն է անում, ինչ վոր ամեն գյուղացի ինքն առանց նկատելու, ամեն որ անում է իր մտքում:

Ես խոսքին գյուղացին կարող է պատասխանել, թե,—«յես իմ աշխատանքն եմ հաշվի առ-

կարողանաւ ստացած փողով քեզ համար հագուստ ու կոշիկ առնել, վոր կարողանաւ ձեռք բերել են ամենը, ինչ վոր պետք է քո տնտեսութեանը: Կարծեմ դեռ չես մոռացել, վոր յերաշտ ելած տարին քեզ փող տվեցին, վոր սերմացու առնես ու ընտանիքդ կերակրես մինչև նոր բերք ստանալդ, և յեթե եդ ոգնությունը չլիներ, տունըդ կքայքայվեր ու ինքդ ել մուրացկան կը դառնայիր:

Դուցե, գյուղացի ընկեր, հիմի ել չես հասկանում վիճակագրութեան տված ոգուտը, դեռ չես ուզում նրան քո լավ բարեկամը ընդունել: Դու, որինսկի համար, կասես, — «Իհարկե, եդ եդպես ե, եդ ամենը շատ ճիշտ ե, բայց եստեղ ինչ գործ ունի վիճակագրությունը: Միթե վիճակագրությունն ե կարգի բերում ճանապարհները, ելեկտրականությունն անցկացնում, խըրճիթ-ընթերցարան, դպրոց կամ թե հանգստի տուն շինում, կռվում խաղողի չոռի ու մորեխի դեմ, ոգնում բամբակագործին, ծխախոտագործին, շերամապահին, գինեգործին, եժանացնում չթի գինը, սերմացու, փող կամ թե այլ մթերքներ տալիս գյուղացուն: Մենք գիտենք, վոր եդ բոլորը մեր Խորհրդային կառավարությունն ե անում, և դրա համար նրանից հոգով չափ շնորհակալ ենք, իսկ վիճակագրությունից

ինչ ոգուտ ենք ստացել: Վիճակագրությունը ավելորդ գլխացավանք ե ու նախնիների բուն»:

4. ԵՊՊԵՍ ՄՏԱԾՈՂԸ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ, ՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՉ ՄԻ ԳՈՐԾ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆԵԼ ԱՌԱՆՅ ՀԱՇՎԻ

Յեթե դու, գյուղացի ընկեր, պիտի քո փոքրիկ տնտեսութեան մեջ միշտ հաշիվ անես, իմանաս ինչքան հող, անասուն, գործիք ու սերմ ունես, յեթե պետք է հաշվես թե ինչքան բերք ես ստացել, պետք է ամեն ինչ չափես ու կշռես, վոր տանդ պահասությունն իր ժամանակին հոգաս, հապա ինչ ես կարծում, կարելի՞ յե մի գյուղի, շրջանի, գավառի, մի հանրապետութեան ու ամբողջ Խորհրդային յերկրների տնտեսությունը կառավարել առանց հաշվի: Դու կարծիքով կարելի՞ յե միթե հենց ենպես, խելքը փչածի պես ճանապարհներ սարքել, խրճիթ-ընթերցարաններ, դպրոցներ, հանգստի տներ շինել, ելեկտրականություն անցկացնել, առուներ բացել, կամ թե սերմացու, հաց ու փող բաժանել: Ի՞նչ կասես դու: Չես ասի, վոր եդ ամենևին ել խելքը գլխին մարդու արած գործ չի: Չես ասի, թե վոր գործը եդպես տարվի, են ե մի յերկու-յերեք տարուց հետո ամբողջ յերկրի տնտեսությունը ենպես կքայլի, վոր թողը դուրս կգա:

Իսկ ի՞նչ եւ կարծում, թե վոր քո գյուղի, շրջանի կամ գավառի տնտեսությունը քայքայվի, քոնը կմնա, թե վոր մարդու գլխում խելք չլինի, նրա վտաններն ու ձեռները կարծող են լավ աշխատել: Ի հարկե վոչ, կասես դու, վորովհետև մարդ վոր խելք չունենա, են ե, նա հեջ բանի պետք չե, կորած մարդ ե:

Գո տնտեսությունը եղ մեծ տնտեսության մի փոքր մասն ե, ինչպես մի մատը մարդու մարմնի վրա: Թե վոր մեծ տնտեսությունը քայքայվի, են ժամանակ կքայքայվեն նրա բոլոր մասերը, դրա հետ քո տնտեսությունն ել կքայքայվի: Անխելք տանտիրոջից՝ մեկ ե, ուզում ե մեծ տնտեսության տեր լինի, թե փոքր՝ ողուտ չկա, հենց մի գլուխ վնաս ե հասնում: Իսկ վորպեսզի մարդ անխելք չլինի, պիտի իր տնտեսության հաշիվները շատ լավ և ամեն ինչ տեղը-տեղին իմանա: Ի հարկե, ամեն գյուղացի եղ բոլորը ինքն անում ե, բայց հենց վոր վիճակագիր ե գալիս եղ նույն հաշիվն անելու, իսկույն բարկանում ե, նեղանում ե, թե իրեն անհանգիստ են անում: Եղ իսկի խելք բան չի, ընկեր գյուղացի:

Լավ միտք արա, վիճակագրին ընդունիր վորպես քո լավ բարեկամին, նա քեզ պետք ե ենպես, ինչպես, ասենք, քո գյուղի բժիշկը, ու-

սուցիչը, գյուղատնտեսը, վորովհետև թե վոր եղ վիճակագիրը չլիներ, շատ հավանական ե, վոր դու վաչ բժիշկ, վոչ ուսուցիչ, վոչ ել գյուղատնտես ունենայիր:

Ես բոլոր ասածներից հետո, գուցե, ընկեր գյուղացի, հասկացար, վոր վիճակագրությունը «գուր գլխացավանք» չի, և վոր վիճակագիրների հավաքած տեղեկություններն անհրաժեշտ են Խորհրդային իշխանությանը, վորպեսզի նա կարողանա ճանաչել գյուղացիների բոլոր կարիքները և յերկիրն ենպես կառավարի, վոր նրանց բոլոր ցավերին դարման անի:

Դուք, ընկեր գյուղացիներ, ինքներդ եք ընտրում ձեր խորհուրդները և գործկոմները և պահանջում եք, վոր նրանք լավ իմանան ձեր բոլոր պահասությունները, վոր ձեր բոլոր կարիքներին ողնության հասնեն: Ախր եղ բանի համար հարկավոր ե, վոր դուք նրանց անհրաժեշտ տեղեկություններ տաք: Յեթե դուք նրանց եղ տեղեկությունները չտաք, կդուրս գա են, վոր, ասենք, դուք մեկի ձեռը հրացան եք տվել, դարավուլ (պահակ) կանգնեցրել, բայց պատրոն (փամփուշտ) չեք տվել, կամ թե պատրաստվում եք մի տեղ գնալ, սելը հանել եք բակի դուռը, բայց յեղներ չեք լծել: Ճիշտ ենպես, ինչպես հրացանն առանց փամփուշտի չի կրակի, կամ սելն առանց

յեզներն տեղից չի շարժվի, ենպես ել խորհրդային իշխանությունն առանց վիճակագրության, գյուղացիների համար չի կարող վոչ մի խելոք և ոգտակար գործ անել:

Վիճակագիրները վոչ մի ավելորդ տեղեկություն չեն հավաքում, նրանք գրում են միայն են, ինչ վոր անհրաժեշտ ե կառավարությանն իմանալու: Իսկ կառավարությունը շատ բան պիտի իմանա:

5. ԻՆՉՈՒ ՅԵՆՔ ՀԱՇՎՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՅԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ

Ամենից առաջ և ամենից զխավորը պետք ե իմանալ, թե քանի՞ մարդ ե ապրում ամբողջ յերկրում, հետ ընկած գյուղից սկսած մինչև ամենամեծ քաղաքը: Պետք ե իմանալ քանի՞ տղամարդ ու քանի կին կա, քանի՞սն են դրանցից աշխատավոր, քանի՞սը մանուկ, պատանի ու ծերունի: Պետք ե իմանալ նույնպես, թե ամեն ազգից քանի՞ մարդ կա և ով ինչքան ժամանակ ե ապրում են տեղում, ուր գտնվում ե, ով ինչո՞վ ե ապրում, քանի՞ գրագետ կա, քանի՞ հաշմանդամ, քանի՞ կույր, խուլ ու համր, խելքից պակաս և այլն:

Ամեն մի տնտեսության մեջ ամենից մեծ նշանակութուն ունեցողը մարդն ե, վորովհետև

եզ տնտեսությունը մարդու վրա յե հիմնվում և տնտեսությունն ել հենց մարդու համար ե: Ուրեմն, յեթե չիմացվի, թե քանի մարդ կա, քանիսն են դրանցից փոքրահասակ, ծերունի և աշխատավոր, քանիսը գրագետ, ով ինչո՞վ ե պարագում, անհնարին կլինի տնտեսությունը ուղիղ կառավարել:

Որինակ, ասենք մի քանի տեղերում անբերքություն յեղավ և եզ տեղերի ժողովրդին հարկավոր ե հացի ու սերմացվի ոգնություն հասցնել: Ես հարցը շատ լուրջ հարց ե: Հո չի՞ կարելի հենց ենպես, առանց ճիշտ հաշվի, հաց առնել: Թե վոր քիչ առար, ժողովրդի մի մասը կմնա սոված ու անսերմ, իսկ թե շատ առար, են ժամանակ ել ավելորդ փող կծախավի և այլևս հնարավոր չի լինի ուրիշ անհրաժեշտ պետքերը հոգալ:

Իսկ վորպեսզի անհրաժեշտ քանակով հացի պաշար պատրաստվի, հարկավոր ե վոչ միայն իմանալ բերքի հաշիվը, այլ և պետք ե հաշվել, թե քանի՞ շունչ կա, քանի՞ ուտող բերան: Յեթե ուզում ենք դպրոց, հիվանդանոց, խրճիթ-ընթերցարան շինել, ելեկտրականություն անցկացնել, ճանապարհներ բացել, հարկավոր ե իմանալ տարբեր հասակի մարդկանց թիվը: Շատ անմիտ բան կլինի, յեթե, որինակի համար, մեծ դպրոց

շինվի ենտեղ, վորտեղ ընդամենը քսան-յերեսուն յերեխա կա, իսկ վորք զպրոց շինվի ենտեղ, վորտեղ մանուկների թիվը մի քանի հարյուր հոգի յե:

Հարկավոր ե նույնպէս իմանալ, թե ով ինչ գործ ե անում: Թե վոր եղ չիմանանք, են դեպքում անայնագործներին, շերամապահներին, բամբակագործներին, ծխախոտագործներին, արհեստավորներին և ուրիշ գործ ունեցողներին խելացի ու հարկավոր չափով ոգնություն հասցնել չի լինի: Դու, գյուղացի ընկեր, կուշտ կծիծաղես, թե վոր տուփերով շերամի սերմ բաժանեն են գյուղացիներին, վորոնք պարապում են ծխախոտագործությամբ, կամ թե բամբակի հունդը տան նրան, ով մենակ ցորեն ե ցանում:

6. ԻՆՉ ԿԱՐԻՔ ԿԱ ԻՄԱՆԱԼՈՒ, ԹԵ ԻՆՉՈՎ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՄԱՐԴԻԿ

Մարդկանց մասին տեղեկություններ հավաքելու ամեն անգամ հարցնում են և նրանց զբաղմունքների մասին, այսինքն, թե նրանք ի՞նչ գործ են անում, ով ինչով ե ապրում:

Գյուղում մարդկանց գլխավոր ու հիմնական զբաղմունքը հողագործությունն ե ու անասնապահությունը: Բայց հողագործությունն ու անասնապահությունը ուրբեր են լինում:

Մի տեղ ուվելի շատ ցորեն են ցանում, մի այլ տեղ՝ դարի, տարեկան, բամբակ, բրինձ, թեյ: Մի տեղ խաղողի այգիներ են տնկում, բաղ ու բախչա գցում, մի այլ տեղ մեղու յեն պահում, շերամապահությամբ պարապում: Կան ենպիսիները, վորոնք բանջարանոցներ են պահում, վորսորդություն են անում, զանազան արհեստներով, ձկնորսությամբ կամ մի այլ գործով են զբաղվում:

Նմանապէս անասնապահությունը: մի տեղ վոչխարը շատ ե, մի այլ տեղ քիչ: Կան ենպիսի գյուղեր, վորտեղ կաթնատնտեսություն ամենևին չկա, բայց կան ենպիսի գյուղեր, ուր շատ պանիր ու յուղ են պատրաստում: Գյուղեր կան, ուր թռչնապահությունը զարգացել ե, կան ենպիսիներն ել, ուր շատ քիչ հավ ու այլ ընտանի թռչուններ կան, ենպէս վոր իրենց հազիվ ե բավարարում:

Վիճակադիրները հաշվում են ու գրում ամեն ինչ, թե ինչքան հող ե ցանվում, ի՞նչ ե ցանվում, ինչքան բերք ե ստացվում, ինչքան խաղողի այգի կա, բաղ ու բախչա կա, քանի՞ փեթակ կա, վորտեղ են շերամապահությամբ, ծխախոտագործությամբ, ձկնորսությամբ պարապում: Ցուցակ են անում, թե քանի գլուխ անասուն կա, զբանցից քանի՞նն ե մեծատավար,

քանի՞սը մանրատափար: Քանի՞ հառ արոր ու գութան կա, ինչ տեսակի յեն նրանք: Ես ամենը խորհրդային իշխանությունը պիտի իմանա, յեթե ուզում ե չափ տանտեր լինի և կարողանա յերկրի հսկայական անտեսությունը խելոք, ուզիդ և գյուղացիների ոգտին կառավարի:

Շատ վատե, յեթե տանտերը չի իմանում, թե ինչ կա իր տանը, բայց ավելի վատ ե, յեթե նրա ունեցած տեղեկությունները ճիշտ չեն, կամ մի մասը կա, մի մասը՝ վոչ: Յեթե խորհրդային իշխանությունը, ասենք, շատ ճիշտ տեղեկություններ ունի մարդկանց թվի մասին, բայց չգիտե, թե նրանք ինչո՞վ են զբաղվում, ինչքան հող ունեն, ինչքան անասուն, եդ դեպքում միևնույն ե, եդ տեղեկություններից բան չի դուրս գա: Ենպես ել բանի պետք չե, յեթե տեղեկություն լինի հողի, վար ու ցանքսի մասին, բայց հայտնի չլինի անասունների թիվը, կամ թե հաշված լինեն անասունները, բայց հայտնի չլինի, թե ինչքան տարածության հող ե ցանված, ինչքան բերք ե ստացված. և եդպես ել բոլոր բաներում:

Ուրեմն վիճակագիրներն իրենց քեֆի համար, դատարկ տեղը կամ թե մարդկանց անհանգիստ անելու համար չե, վոր եդ ամենը դրում են, այլ նրա համար, վոր եդ բոլոր տեղեկություն-

ներն անպայման հարկավոր են, վորպեսզի խորհրդային իշխանությունն իմանա, թե մարդիկ ինչպես և ինչո՞վ են ապրում և կարողանա չափ ու ձևով և տեղը-տեղին հաշիվ անելով, կառավարի յերկրի անտեսությունը:

7. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԵՏՔ Ե ՃԻՇՏ ՈՒ ՃՇՄԱՐԻՏ ԼԻՆԵՆ

Վիճակագրության մեջ ամենագլխավորն ու կարևորն են ե, վոր հավաքած տեղեկությունները ճիշտ ու ճշմարիտ լինեն:

Յեթե վիճակագիրները խորհրդային իշխանությանը սուտ ու սխալ տեղեկություններ տան, ուզում ե դիտմամբ, թե չգիտենալով լինի, եդպիսի տեղեկություններից բան չի դուրս գա, և կարող ե պատահել, վոր աշխատավորությանը ոգուտ ապուս փոխարեն մեծ վնաս հասցնի: Ասենք թե, մի գյուղացի ունի 8 դեսիատին հող, 5 գուլգ յեդ և $\frac{1}{4}$ դեսիատին խաղողի այգի, բայց նա սկսի ենպես աշխատել, իբր թե ունի 4 դեսիատին հող, 2 գուլգ յեդ, իսկ այգի բոլորովին չունի: Ի՞նչ դուրս կգա դրանից: Են, վոր հենց առաջին տարում ենպիսի շխափլավ կստացվի, վոր ամբողջ անտեսությունը կքայքայվի: Եդ նույն դրությունը կստեղծվի գյուղում, քաղաքում ու ամբողջ յերկրում, յե-

53453
8001

թե Խորհրդային իշխանությունը անտեսությունը տանի վոչ թե են հաշվով, ինչ վոր կա, այլ պակաս կամ ավել:

Վերցնենք արոտատեղիների որինակը: Արոտատեղի խնդիրը շատ խառը հարց է: Նա դեռ թագավորի ժամանակից եղպես խառն է յեղել և ավելի խառնիփնթոր դարձավ մենշեիկների, դաշնակների ու մուսավաթիստների ժամանակ:

Խորհրդային իշխանությունն աշխատում է անամապահներին հանի եղ խառնակ վիճակից, հնպես, վոր նրանք ենքան արոտատեղի ունենան, ինչքան վոր անասուն ունենա: Բայց ասենք թե, մի գյուղում, ուր հազար գլուխ տավար կա, գյուղացիք մենակ 500 գլուխ ցուլց տվին, իսկ մնացած 500-ը թագցրին:

Հիմի տեսնենք, թե զրա հետևանքն ինչ կըլինի: Են, վոր կառավարությունը կվերցնի ու եզ գյուղին 500 գլուխ տավարի արոտատեղ կտա, այսինքն պակաս, քան նրանց հարկավոր եր:

Մի ուրիշ որինակ ել բերենք: Ասենք, գյուղացիք թագցրին իրենց հողի տարածությունը և 500 դեսիատինի տեղ 300-ը ցուլց տվին: Դրա հետևանքն են կլինի, վոր յեթե եզ գյուղում յերաշտից բերքը փչանա, Խորհրդային իշխանությունը մենակ 300 դեսիատինի համար սերմացու կտա, իսկ 200 դեսիատին կմնա տոմսից

սերմի: Եզ նույնը կպատահի խաղողի այգիներին, ծխախոտի, շերամի և ընդհանրապես գյուղատնտեսական բոլոր գործերին հետ: Իսկ յեթե հենց հնպես, առանց լավ հաշիվ անելու ավել ցուլց տան, եզ դեպքում ել ժողովրդի փողերը ավելորդ տեղը կծախսվեն:

Ուրեմն սուտ չալտի խոսել վոչ միայն դիտավորյալ կերպով, այլ և սխալվելով: Հարկավոր է ամեն մի հարցի մասին լավ մտածել և ցուլց տալ առանց թագցնելու կամ ավելացնելու են, ինչ վոր կա:

8. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԳԱՎՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՅԵՎ ՀԻՄԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԱՆ ՈՐՈՎ

Թագավորի ժամանակն ել մեկ-մեկ զանազան վիճակագրական տեղեկություններ եյին ժողովում, բայց են ժամանակ զրա նպատակն ուրիշ եր: Են ժամանակ եզ տեղեկությունները կալվածատերերի, կապիտալիստների և թագավորական չինովնիկների ոգտի համար եր, իսկ բանվորներին ու գյուղացիներին մենակ փշրանք ու կրծած վոսկոր եր բաժին հասնում, են ել միայն մեկ-մեկ անգամ: Ուրեմն զարմանալի չե, վոր գյուղացին վիճակագրին չեր սիրում և դեռ նրանից վախենում ել եր: «Կիմանան մեր ունեցած-չու-

ենցածը ու ծառի պէս կալուկեն» — ահա ինչ էյին մտածում գյուղացիք թագավորի վիճակագիրներին մասին ու աշխատում էյին ինչքան կարող են, շատ սուտ անեն:

Խորհրդային իշխանության ժամանակ բոլորովին ուրիշ է: Նն ամենը, ինչ վոր անում է բանվորա-գյուղացիական իշխանությունը, եղ բոլորը աշխատավորների ոգտի համար է անում: Դե, ուրիշ կերպ էլ լինել չեր կարող, թե չէ, իշխանությունը բանվորա-գյուղացիական չեր լինի: Ճշմարիտ է, գյուղացիները՝ վորովհետև նալոգներից դեռ վախենում են, մինչև հիմի էլ ենպես են կարծում, վոր նալոգների պատճառը վիճակագրությունն է, դրա համար էլ աշխատում են իրենց ունեցածը ինչքան կարելի յե քիչ ցույց տալ: Բայց դա շատ մեծ ու փաստակար սխալ է:

Կառավարությունը վորպեսզի կարողանա յերկիրը կառավարի, տնտեսությունը բարձրացնի, պաշտպանի մեզ թշնամիների հարձակումներից, միլենոյն է, պիտի հարկ հավաքի ժողովրդից, ուզում է վիճակագրություն լինի, թե չլինի, ուզում է գյուղացիք ճիշտ թե սխալ տեղեկություն տան վիճակագրին: Նստեղ ուրիշ վոչինչ անել չի կարելի, միայն թե հարկավոր է ենպես ուղիղ դործ բռնել, վոր հարկը հավաքվի ճիշտ, ամենքից ենքան, ինչքան նրանք ունեն, վորպեսզի վոչ վոր

չֆուսովի, վոչ վորքից ավելի չվերցվի: Իսկ սուտ խոսելուց վոչ մի ոգուա չի դուրս դա, հենց մենակ դործը կխառնվի, են էլ ենպես, վոր դեռ կարող է պատահել, ավելի հարկ հավաքվի:

Նգպիսի դեպքում գյուղացին միտք կանի, թե «ես ինչպէս բան է, յես քիչ եմ ցույց տվել, բայց իմ նալոգը շատ է դուրս յեկել» ու կզայրանա, բայց յեկեք հաշվենք ու տեսնենք, թե եղ բանն ինչպէս կարող է պատահել:

Անդրկովկասը տարեկան ենքան հացի բերք չի ստանում իր ցանքսերից, վոր բավականացնի իր ժողովրդին, դրա համար էլ կարիք է լինում դրսից հաց ստանալ: Վորպեսզի ժողովուրդը սպեկուլյանտների ճանկը չլինին, եղ պակաս հացի պաշարը ինքը կառավարությունն է պատրաստում: Հս շվով ամեն տարի դրսից բերվում է 12-15 միլիոն փութ ալյուր-ցորեն, իսկ յերաշտ յեղած տարին՝ ավելի: Հիմի հաշիվ անենք:

Անդրկովկասը ունի մի միլիոնից քիչ պակաս գյուղական տնտեսություն: Յեթե ամեն տնտեսություն թեկուզ մի փութ պակաս ցորեն ցույց տա վիճակագրին, են ժամանակ դուրս կդա, վոր ամբողջ Անդրկովկասում մոտ մեկ միլիոն փութ ցորեն պակաս է, և կառավարությունը չիմանալով, վոր եղ տեղեկությունը սուտ է, մեկ միլիոն փութ ցորեն-ալյուր ավելի կառնի, քան հար-

կաժուր եր: Դուրս յեկավ, վոր կառավարությունը
փառս ունեցավ, ասենք, մի միլիոն մանեթ:

Բայց եղ փաստը վերջը մի պիտի տա: Ինչ-
պես ել ուզում ես շուռ ու մուռ արի, փախս
տուր, մեկ ե, բան չի դուրս գա, եղ փաստը
վերջ ի վերջո ժողովուրդը պիտի տա: Այսինքն
հարկը մեկ միլիոն մանեթով կավելանա:

Ուրեմն սուտ խոսելու պատճառով ժողովուր-
դը մի միլիոն մանեթ ավելորդ հարկ ե տալու:
Հիմի ի՞նչ կասես, ընկեր, սուտ խոսելը ոգճուտ
ավեց: Մի մանեթի սուտ խոսեցիր, հարկդ ել մի
մանեթով ավելացավ: Թե վոր սուտ չեյիր ասել,
են ե, եղ մանեթն ել չեյիր տա: Դու, կարող ե
պատահել, կասես, վոր հարկը հո մենակ գյու-
ղացիները չեն տալիս, առևտրից ել, ֆարքիկա-
ներից ել են հարկ վերցնում: Ասենք թե եղ-
պես ե, բայց դրանից ի՞նչ ոգուտ, չե՞ վոր ինչ-
քան շատ լինի հարկը, ենքան ել կթանգանա
նավթը, կտորեղենը, չայ-շաքարը, կաշին, յեր-
կաթը և ընդհանրապես են ամենը, ինչ վոր ին-
քող չունես ու քաղաքում պիտի առնես:

Վերջ ի վերջո հաշիվը մեկ ե, սուտ խոսե-
լուց վոչ թե ոգուտ կստանաս, այլ կփաստվի
թե դու և թե ամբողջ ժողովուրդը կփաստվի:

Իսկ քո թագաւորածը մենակ մի փութ ցորեն
եղ, ավելի բան չեր:

Շատ ուրիշ որոնականեր ել կարելի յե բե-
րել, բայց կարիք չկա, վորովհետե վիճակագրու-
թյունը վոչ մի կսող չունի հարկերի հետ:

Հարկերի համար ուրիշ կամխախտներ կան,
ներանք են գալիս ցուցակ անում, հարկեր նշա-
նակում ու հավաքում, ենպես վոր եղ մասին
եստեղ խոսելն ավելորդ ե:

9. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒ- ԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆ Ե

Դյուղացի ընկեր, են ամենը, ինչ վոր ես-
տեղ գրած ե, պիտի լավ կարգաս ու դրա մա-
սին լուրջ մտածես: Թե հարեանդ անգրագետ ե,
ներա համար ել կարգաւ ու բացատրիր:

Վիճակագրությունը ամբողջ ժողովրդի/գոր-
ծըն ե, և դրա համար ել բոլոր աշխատավորները,
առանց բացառության, պիտի պարզ ու լավ ի-
մանան, թե ի՞նչ ե վիճակագրությունը և ինչի՞
համար ե:

Իսկ վոր եղ բանը հատկացան, են ժամանակ
ներանց համար լույսի պես պարզ կլինի, վոր վի-
ճակագրությունը իսկապես աշխատավոր ժո-
ղովրդի ամենամեծ յեղ ամենամտաւոր
բարեկամն ե:

ՀՀ Ազգային գրադարան



NL0187768

